

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՓՈՐՁ

Մարդ կը ծնի բանաստեղծ, կամ չի ծնիր:

Բանաստեղծութիւնը ուսումնառելի է. կարելի է արուեստով տիրանալ անոր, այլապէս՝ պիտի ըլլայ ցուրտ, անկենդան, արուեստական:

Ներշնչումը ուսումնառելի է սրտին դէպի զեղեցիկութիւն՝ միտքէն ստացուած ջրդով ու մկանով:

Սրտին այդ խոյեանքը մարդիկ կոչած են հանճար, տարօրինակութիւն. կոչած են նաեւ խենդութիւն:

Կարեւորը ծնունդն է, սրտի և հանճարի այդ շնորհքը. հոգ չէ՝ թէ մէկը ըլլայ պատմաբան Փաւստոս Բիւղանդ, միւսը՝ ճգնաւոր Նարեկացի, եւ աս՝ աշուղ Սայեաթ-Նովա:

Եթէ ծնած են բանաստեղծ՝ անոնց տրւած պատմութիւնը պիտի վերածուի դիւցազններգութեան, աղօթքը՝ քնարերգութեան, եւ աշուղին խաղը՝ իրաւ բանաստեղծութեան:

* * *

Քամանչան ձեռքին, Սայեաթ-Նովա կը մտնէր ԺԸ դար, երգելով:

Քանի սաղ է Սայեաթ-Նովէն,
չա՛տ բան կու տեսնիս, քամանչա՛:

Աշուղի խօսք չէ ասիկա, աշուղ՝ Արեւելքի մէջ այդ օրերուն առումով, որոնք շատ էին, բայց որոնց երգը ուրիշներունն էր, հին մեծերունը, հազար անգամ կրկնուած, հազար անգամ լսուած: Այս տողը, քամանչային ուղղուած այս հպարտ առաջադրութիւնը՝ իր մեծութեան դի-

տակից, իր անմահութիւնը պատգամող բանաստեղծի ինքնահռչակումն է, ի՛ր խել, Արուսթին՝ Սայեաթ-Նովայի բերնով: Ինքը ծնած էր բանաստեղծ, եկած էր այդ կոչումով. պէտք է ամէն ինչ իր սրտին մէջ երկնուէր. չէր կրնար ուրիշը կրկնել: Գեղեցիկութիւնը իր մէջ կը յայտնուէր ուրիշ գոյներով, ուրիշ անսիրներով. ինքը ունէր ի՛ր ջուրը, ի՛ր դիւրը, եկած էր դանոնք տալու:

Ամէն մարք չի՛ կանա խըմի՛
իմ ջուրըն ուրիշ ջրէն է.
Ամէն մարք չի՛ կանա կարքա՛
իմ գիրն ուրիշ գրէն է:

Եւ վարարած այդ ջուրը, թաւալող այդ խօսքերը, իրապէս ամէն մարդ չէ կարող խմել ու կարդալ. անոնք կու դային մեծ, սիրատուօր սրտի մը արիւնովը թաթաւուն. անոնք կու դան տակաւին, կը խօսին բոլոր սիրող սրտերուն, կը խմուին ու կը կարգացունին որպէս իրաւ բանաստեղծութիւն:

Այսօր եթէ ամբողջ հայութիւնը ոտքի՛ կ'ողեկոյժ մեծ բանաստեղծ-աշուղին ծըննդեան 250ամեակը, յարգանքի տուրք ըլլալէ աւելի՝ երկրւղած, սիրալիր խոնարհութիւն մըն է ատիկա խալիսի Նոֆարին մեծութեան առջեւ:

* * *

Ո՞վ էր Սայեաթ-Նովա, ե՞րբ, ո՞ւր ծընած, ի՞նչ կեանք ապրած. ե՞րբ, ի՞նչ մահով մեռած. այդ բոլորը մութ է տակաւին. թող բանասէրները պրպտեն ու գտ-

նեն: Արդէն մեծ բան մը չի կրնար աւելցնել թուականի մը, վայրի մը, անունի մը ճշտումը: Ձեռք կրնար այլեւս, երկու դար ետք, վերակառուցանել կեանքի մը հոգեկան – զգացական անդրադարձներով հարուստ փուլերը՝ որոնք կրնային, աւելին՝ անհրաժեշտ են բացատրելու ենթակային նկարագիրն ու բանաստեղծութեան տուն տուող հոգեվիճակները: Իրենց դործերէն ու աւանդութենէն եկած որոշ դադար մը կազմած ենք հիներուն մասին, թէ՛ անրաւարար, բայց անփոփոխելի:

Գիտենք թէ Սայեաթ-Նովան կար, հայ էր, երգեց առաւելապէս վրացերէն ու սուրբաշնորհներէն, երգեց նաեւ հայերէն: Կ'ընդդէմ նաեւ, ատու շեշտելով ԺԸ դարու մեր աղգային կեանքը եւս, երբ հայը պատմական-քաղաքական տխուր դէպքերու բերումով, իր աղգային հաւաքական կեանքէն զրկուած՝ կը ստիպուի ծառայել օտար տէրերու. հայ դօրականը կը դործէ օտար բանակի մէջ, հայ վաճառականը կը հարստացնէ օտար քաղաքներ, եւ դարուն մեր մեծագոյն բանաստեղծը՝ Սայեաթ-Նովա կ'երգէ Վրաստանի արքունիքին մէջ, անշուշտ վրացերէն, կ'երգէ օտար բաղմութիւններու՝ այս անգամ ատրպէյճաներէն:

Հայերէնով, Սայեաթ-Նովայէն հասած են հարազատ 65 խաղ: Աւելցնենք ասոնց վրայ քանի մը տարակուսելիներ եւ հարազատներէն պակսեցնենք քանի մը առակ, բառախաղ, պարզ խրատական, եւ կ'ունենանք մօտ 60 խաղ իրաւ բանաստեղծութիւն:

60 խաղ միայն. քիչ է եւ շատ. կեանք մը բացատրող, վերլուծող ամբողջական բանաստեղծութիւնը չենք ունենար, բայց կ'ունենանք զայն ապրող սրտին մեծութեան, ապրումին ու ժպտութեան հարազատ մէկ պատկերը, մանաւանդ որ բարձրագոյն ենթակայական են այդ խաղերը: Սրտին ձայնը երբ անկեղծ է, իր մէջ կը խտացնէ ենթակային նկարագիրը, զգացական-հոգեբանական նրբութիւններով. շատ աւելի կը ճանչնանք անկեղծ, իրաւ ենթակայական բանաստեղծները,

ապրած դուցէ՛ դարեր առաջ, քան մեր շուրջիները՝ որոնք չեն արտայայտուիր, մեր մտերմութենէն կը խուսափին, մեղի հետ չեն հաղորդուիր: Սայեաթ-Նովան կը ճանչնանք, սրտակից մտերմութեան զնով:

Մեր երեւակայութեան մէջ ամէնէն առաջ աշուղ է ան, ձեռքին քամանչա՛ գոր ոչ ոք պիտի յանդգնի խել. աչքերուն՝ սիրոյ մորմոք ու խորութիւն: Այդ աչքերը տեսած են Գողաղը... Իր դէմքը կը շեշտէ խառնուածքի ոյժ ու սաստիկութիւն, կիրք ու ապրելու անօթութիւն. սակայն տառապած ու տառապանքէն աղնուացած, դարձած թափանցիկ, լուսաւոր: Այսպէս է սիրերգուն որ մեղ կը յուզէ, մեղ կը տանի Գողաղի կրակին, էշխի ծովուն: Երբեմն ան կը յայտնուի նահապետական. սիրոյ աննման հաղներգուն վերածուած է մեծ բեգարածին՝ ծանրախոհ ու լուսամիտ իմաստուն, գողաղներու կրակով բռնկած այս աշխարհին մէջ իրրեւ մնայուն արժէք մեղի պատգամելու սէրը գիրին, դալամին, դալքարին: Այսպէս կ'երեւակայենք Սայեաթ-Նովան. եւ ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ արդէն: Արհեստով կրնար ըլլալ ջուհակ, հիւսն կամ սոսկ աշուղ. իր հոգեկան կեանքէն ոչինչ կը փոխուէր. այդ աղգայիններէն վեր էր ան, ուրիշ, աստուածային յայտնութեան մը մէջ, եւ թէ՛ Եւ խալիսի երգիչ՝ սակայն խալիսին հետ, խալիսին պէս չէր կրնար ապրիլ. Պոտըլէրի բառերով՝ իր հսկայի քեւերը զինք քալելու պիտի արգիլէին:

* * *

Ի՞նչ աղղեցութիւններով, զրաւան-մշակութային ի՞նչ ծանօթութիւններով քամանչան ձեռք կ'առնէր Սայեաթ-Նովա. ոչինչ կրնանք հաստատել կամ ժխտել: Գուցէ ծանօթ էր դրարար լեզուին եւ ատու՝ մեր հին, կրօնական բանաստեղծութեան, սկսած Նարեկացիէն մինչեւ Երզնկացիներն ու Ֆրիկ, Աղթամարցի ու Թլիկուրանցի, եւ դուցէ՛ ոչ: Թերեւս կը ճանչնար պարսկական կամ այլ արեւ-

լեան բանաստեղծներու գործերը, և թերեւս ոչ: Իր յիշատակած անուններուն վերայ հիմնուած՝ կարելի չէ հաստատել իր գիտութիւնը: Ծանօթ էր անշուշտ իր վարպետներէն լսած, այդ օրերու աշուղներէն կրկնուած արեւելեան բանաստեղծութիւններուն եւ երգելու, երգ յօրինելու արուեստին: Ատրպէյճաններէն երգի մը մէջ կ'ըսէ.

Յիս չիմացա, վունց փաքաքվից
աշըղուքինն իմ գլխին.
Ինն դիվանա Մէջլուս շինեց,
յիդ գրքից իմ կրակին.
Իննըն ամիս անեցրիլ է,
լուս դառնայ իմ մօր հոգին,
Բալբամ կաքի հիդ իմ ծրծի,
Էն շիրիս իմ ման գալի:

Այսինքն՝ թէ բանաստեղծ ծնած էր ինք, եկած էր այդ կոչումով:

Երբ բնատուր է բանաստեղծութիւնը, երբ ներշնչումը հարադատ է, ազատ, այն ատեն արտաքին բոլոր ազդեցութիւնները կը մոռցուին եւ հոգին կու տայ իր երգը:

Երգելու արուեստը խորացուցած, մերցումներու մէջ յաղթանակներ խլած աշուղ էր Սայեաթ-Նովա եւ անշուշտ պիտի երգէր աշուղական արուեստով, պիտի երգէր խաղով:

Բանաստեղծութիւնը երգով սկսաւ. երաժշտական լարը անբաժան էր խօսքէն. այսպէս էին յոյն աէտները, այսպէս կ'երգէր եւ Դաւիթ: Բանաստեղծութիւնը սրբաբան ձայնն է՝ մաքուր, հարադատ. սիրտը՝ լար, որ պիտի թրթռայ իր հովերէն՝ սէր, վիշտ, ուրախութիւն. և կը բաւէ որ յուզական ըլլայ այդ ձայնը, ըլլայ անմիջական, հաղորդական: Այսպէս սկսաւ քնարերգութիւնը: Այս տեսակ բանաստեղծութեան համար զրական-մտային խոր ծանօթութիւններ անհրաժեշտ պայման չեն: Նախնական է ան նաեւ իր նիւթով. չի կրնար կեանքէն, մարդու կենսական ապրումներէն դուրս գալ, մտնել մտքի սահմաններուն մէջ, ընդարձակուիլ. ինչ որ կրնայ բանաստեղծութիւնը զարճնել զանազանեալ, աւելի հարուստ,

բայց որ կրնայ նաեւ դայն շեղել իր նպատակէն, վնասել քնարերգութեան միայն ենթակայական հասկացողութեան: Ասկէ տուած է նոյնիսկ Նարեկը:

Ըսինք թէ մարդ կը ծնի բանաստեղծ, կամ չի ծնիր:

Ծնունդով բանաստեղծ են անոնք՝ որոնք կրնան զգալ, կրնան իրենց սրտին մէջ ապրիլ բնութեան, մարդէն անկախ՝ բայց մարդուն մէջ ցոլացած ու իմաստ, ձայն, զոյն, գեղեցկութիւն, չափ ու կըշիւ ստացած բոլոր ներդաշնակութիւնը, մեծութիւնը, ապրիլ ամբողջութիւնը՝ ամբողջապէս: Այն ատեն է որ սիրտը կը ստանայ, կ'ապրի ու կու տայ ամէնէն ազնիւ, ամէնէն չքեղն ու ամէնէն զօրաւորը: Այդ ապրումը այնքան բուռն է՝ որ սիրտը մարդկային հասարակ բնութեան վեր կու գայ, կը դառնէ կատարեալ իր ազատութիւնը, կը դառնայ տարօրինակ, անկարելի, ծայրայեղ, շատերուն համար հիւանդազին ու խենդ: Այս է բանաստեղծին առաւելութիւնը եւ ասոր հասնելու համար ուսում չկայ, ծանօթութիւնները երկրորդական են, եթէ ոչ աւելորդ: Բանաստեղծութիւնը պիտի ըլլայ ձայնն ու իմաստը այդ ապրումին, այդ մեծ խռովքին, այդ հիւանդազին ցնծութեան: Սայեաթ-Նովան խաղ կանչելու համար՝ նիւթի, մարդկային միտքը տանջող մեծ հարցեր չօշափելու կարիքը չունէր, որովհետեւ իր խաղին նպատակը ինքն իսկ էր, բանաստեղծութիւնը:

Սակայն այս ամէնը արդելք չէ որ Սայեաթ-Նովա չըլլայ նաեւ մտածող մը՝ արեւելեան, աշուղական. հասկացողութեամբ, այսինքն՝ կեանքի փորձառութեամբ, մարդկային հոգիին ճանաչողութեամբ տիրացած մարդկային փիլիսոփայութեան, եւ զարձած իմաստուն՝ հին օրերու առումով, սրտի ու մտքի ճամբով, եւ ոչ թէ գիտական, կաղապարաւոր չորութեամբ: Սայեաթ-Նովայի նախնական, մաքուր բանաստեղծութեան մէջ կը տիրէ նաեւ զօրութիւնը մտքին: Այդ միտքն է որ զգացական բանաստեղծութեան կու տայ անհրաժեշտ կնիքը:

սրտին ձայնը ատով կը ստանայ ոյժ, հաւասարակշռութիւն, իմաստ եւ զարերուն հետ քաղելու մեծութիւն:

* * *

Սայեաթ-Նովայի խաղերը գրեթէ բոլոր սիրային են: Իրապէս, առանց ճանշնալու իր ապրած կեանքը, առանց որոշ կարենալ ըսելու նոյնիսկ թէ վրացիներու արքայազուստը՝ Աննան էր իր սիրոյ առարկան, ինչ որ բնականօրէն սէրը պիտի դարձնէր ցաւալի, անհասանելի, անմիթաբար, կրնանք հաստատապէս ըսել, սակայն, թէ մեծ սիրող եւ սիրոյ մեծ երգիչ մը եղած է Սայեաթ-Նովա: Նիւթեղէն, մարմնական ոչինչ ունի այդ սէրը. Գողալը, անունը Աննա կամ չեմ գիտեր ինչ, տեսակ մը Laura է, զուգէ ոչ նոյնքան զաղափարական, հմայող, բայց աւելի զգալի, շատ աւելիով ներկայ, աւելիով ու կենդանացող: Իտալացի մեծ արուեստագէտին դասական լուսաւոր ու բազմակողմանի միտքը չունի, չի կրնար ունենալ. մեր աշուղը. բայց Գողալին կեանք տալու եւ սէրը սաստիկօրէն ապրելու ունի հայուն խառնուածքը՝ որ կիրք է ու պոռթկում: Իսկապէս հայուն սէրն է ասիկա, ուր կ'ինքն՝ հակառակ շատ բուռն զգացողութեան ու երեւակայութեան՝ ազնուացած, զաղափարականացած է հնդկերոսական մեր արեւան ու քրիստոնէական կրօնքին դժով, ու ատով զանազանուած Արեւելի սիրերգչուներուն մեղկութենէն ու բրտութենէն: Փուշակեան մաքուր, բիւրեղային սէրն է ասիկա, այն՝ որ տասը տարեկան մանուկն իսկ մտնի պէս կը դադարէր. միայն թէ այս անգամ ժողովրդական քառեակի պատուական դուրս եկած, զգացած բանաստեղծ հոգիի մը նկարագիրը, զարձած է աւելի խոշոր ապրում, վերածուած մեծ քնարերգութեան:

Սայեաթ-Նովայի սէրը պիտի յայտնուի կրակով. էշխրն վառ կրակ է՝ երվելով կու գայ: Կրակէ բովին մէջ է որ սիրտը պիտի մաքրուի, տաղուի. Մտայ էշխի

ֆուրէն խալիս դառնալու, սիրտս էլաւ ֆաքար: Բոցեղէն այդ մկրտութենէն հողին պիտի ստանայ նաեւ իր գեղեցկութիւնը. Լաւ ֆուրայում հալած օսկի, կրակից է, վուր սիրուն իս: Եւ կրակը պիտի սաստկանայ բոցին բոլոր վայրագ, լալիլիլի, ոչնչացող սաստկութեամբ:

Նման սէր մը անշուշտ որ երանական, ուրախ, զարնան լոյսով ու ծագիկներով օծուն էր կրնար ներկայանալ: Շատ քիչ անգամ Սայեաթ-Նովա սրտին մէջ պիտի ապրի ներդաշնակ, քեքուչ հպումը սիրոյն, երբ կրակը պիտի թարթէ խորհրդաւոր ու անոյշ, ու պիտի ունենանք մեր սիրային գրականութեան մէջ ամէնէն աւելի խորհրդապաշտ քնարերգութեամբ թաթաւուն գոհարները: Ատոնք կը կոչուին ՔԱՆԻ ՎՈՒՐ ԶԱՆ ԻՄ, ՈՒՍ-ՏԻ՞ ԿՈՒ ԳԱՍ, ԱՇԽԱՐ ՀՈՒՄԸՍ ԱՆ ԶԻՄ ՔԱՇԻ, ՄԷ ԽՕՍԿ ՈՒՆԻՄ ԻԼԹԻՄԱԶՈՎ, ԶԻՍ ԱՍՈՒՄ ԹԷ, ԲԼԲՈՒԼԻ ՀԻԴ ԼԱՅ ԻՍ ԷԼԻ. ու յետոյ, սիրայիններէն դուրս, բեղարած աշուղին զլուս դործոցը՝ ԱՇ-ԽԱՐ ՀԸՍ ՄԷ ՓԱՆԶԱՐԱ Է: Այսքան միայն. մնացած բոլոր խաղերուն մէջ սէրը պիտի ներկայանայ միշտ բոցափառ, անգիմադրելի:

Բաս աշուղը վոնց դիմանայ էտ ֆուսոված կէծակուն.

Թէ վուր սարերուն հանգիլիս, կու հալիս մուսի նըման.

Կրակը պիտի ճարճաթի եւ պիտի իշխէ բոցին կարմիրը.

Դուն կրակ, հագածդ կրակ, վոնք մէկ կրակին դիմանալ.

Եւ զեռ պիտի սաստկանայ, պիտի լըսուին միտի, սրտի, հոգիի ճենճերուն միտքաբարձ ձայները, հեծեծանքները.

Զիգարըս կրակ իս տըվի, երվում իմ՝ բիրյան իս անում.

Էշխմէտ հիւանդացիլ իմ, վունց կու միտնում, վունց քէ սաղ իմ.

Էրվեցալ խունի ջիգարըս,

Արնի պէս աչքս է լալի յանա-յանա,
յանա-յանա:

Աչքի լուս, կսկծալի՝ յանա-յանա,
յանա-յանա:

Եւ այսպէս խաղեր իրարու յաջորդող,
հրդեհներ՝ իրարմէ անջատ կամ չվթայ
կազմած, մինչեւ որ սէրը պահանջէ նոյն-
խաղ գոհարերութիւն:

Կու միռնիմ, էլ ինձի պէս չիս տխանի.
Քու Սայեաթ-Նովէն իմ, մի անի զամիշ:

Հոս պիտի սկսի սիրոյ եւ մահուան
տրամբ եւ պիտի լսենք հին, աշխարհիկ
բանաստեղծութեան ամէնէն տխուր, ա-
մէնէն ցաւած բանաստեղծութիւնը:

Վո՛ւնց դիմանամ էսչափ չարին՝
Աչկեմէս կաքում է արին:

Հարկ չկայ ուրիշ օրինակներու. արիւ-
նած այս տողերն են որ պիտի շատնան ու
իշխեն, պիտի բնորոշեն բուն Սայեաթ-
Նովան, տառապածը՝ որուն ուսերուն
կեանքը ծանր պիտի ճնշէ այլեւս եւ պի-
տի դառնայ նահապետական մեծ բեղա-
րածը:

Անշուշտ որ այս սիրերգութիւնը մեծ
չափով տխուր է, վերածուած տեսակ մը
եղերերգութեան:

Բայց ի՞նչ է այդ ցաւը:

Սիրով չջերմացած, աննպատակ կեան-
քի մը ունայնութենէն փախչող եւ գինիի
երանութեան մէջ իր տեսիլը դտած խա-
կամին ցաւը չէ ասիկա՝ յոռետես ու մը-
ռայլ փրկիստփայ. այլ կեանքին փարող,
դայն լեցնող, գեղեցկացնող ու նիւթա-
կան պարունակէն դուրս բերող սիրոյ լու-
սեղէն սարսուռն է ասիկա: Սխալ է դայն
մեկնել անկարելի, մերթուած սիրոյ մը
յուսահատութեամբը: Յոռետես չէ Սայ-
եաթ-Նովան. բնդհաղաղակը, սէրը կեան-
քէն ալ աւելին, անմահութիւն է իրեն
համար:

Աշխարհումբս ախ չիմ քաշի, քանի վուր
ջան իս ինձ ամա:

Անմահական ջրով լիքն ոսկէ փրկչան իս
ինձ ամա:

Նոյնիսկ իրրեւ ոչ սիրող, իրրեւ ապ-
րող մարդ, հակառակ սիրոյ կրակէն իր
սպառումին, հակառակ որ բեղարած է
ինքը կեանքի քաղերէն, դաղերէն, վա-
ղերէն ու խաղերէն, սակայն իր հողին
լեցումը է մարդկային պայծառ, լաւա-
տես փրկիստփայութեամբ:

Գուզիմ՝ ումբըս հեկց անց կացիմ՝
օրս մուկաք չը քաշէ:

Թէգուզ հագար դարդ ունեմամ՝
դարս մուկաք չը քաշէ:

Ղաստ անիմ, բարու հանդիպիմ՝
չարս մուկաք չը քաշէ:

Գըլուխըս չարէն ուղ անիմ՝
սարս մուկաք չը քաշէ:

Էրեսըս հայալու պահիմ՝
արս մուկաք չը քաշէ:

Բնաւ զարմանալի չէ որ այս պայծառ
սրտին երգը տխուր ըլլայ: Իր ցաւը
հիւանդի, պարտուածի ցաւ չէ: Կա՞յ ա-
ւելի լուսաւոր ու խորունկ տող սիրային
մեր բոլոր բանաստեղծութիւններուն մէջ,
քան Գուզիմն ուղղուած սա կանչը:

Թաք յիս միռնիմ՝ դու սաղ ըլիս,
էշխըս իմ գիրիզման է:

Տարօրինակ պատկեր, բիրտ ու հրաշա-
լի. սէրը՝ գերեզման. բայց ոչ վախճան,
տխուր վերջակէտ. այլ եթէ անպայման
պէտք է մեռնիլ, եթէ աններող է սիրոյ
կրակը, թող մեռնի ինքը՝ երված ջիգա-
րով, մաշված ջանով ջրատար Սայեաթ-
Նովան, կը բաւէ որ ապրի Գուզիմն ու իր
սէրը ըլլայ մահուան գերեզման. իմա ան-
մահութիւն:

Յոռետեսութիւն է ասիկա. երբեք
այլ Նարեկացիի ի հուր քախծութեան
անձին տոչորմանն է, այսինքն՝ սիրոյ
ուժղութիւնը, վայելքին սաստկութիւ-
նը, զօրաւոր ապրումի մը սպառող հե-
քը: Երբ սաստկօրէն կը սիրէ մարդ՝ կը
տառապի, ինչպէս կընայ տառապիլ նա-
եւ արուեստի գլուխ գործոցի մը գիմաց,
հաճոյանալով մէկտեղ, երբ հողին մտած

է մեծերու աշխարհէն ներս, հասած մեծ
գեղեցկութեան: Իսկապէս, բոլոր մեծե-
րուն զործերը կը կրեն տխրութեան այդ
զրոյմը, սկսած Հոմերոսէն: Տխրութիւ-
նը, ցաւը, կեանքէն անբաժան՝ դայն կ'ի-
մաստնաւորեն, հրճուանքէն անբաժան՝
ապրելու զգացողութիւնը կը շեշտեն: Ա-
մէնէն մեծ ապրումը անշուշտ որ սէրն է,
եւ ցաւով պիտի յայտնուի՝ տալու անոր
հասունութիւն, ոյժ ու խորք:

Շատ մարք կա՝ եմ գըլխէն սըրտում ունէ
դամ (վիշտ).
Բազի մարք չէ քաշի էշխեմէն է խամ:

Ի՞նչպէս կընանք բնորոշել նման սէր
մը. խենդութիւն. այո՛, այսինքն բանա-
ստեղծութիւնը ինքնին: Խալիս Նոքար ա-
շուղը չէ, այլ բանաստեղծն է որ կը սի-
րէ՝ բանաստեղծօրէն, երբ իր բնութենէն
ու բանականութենէն դուրս եկած՝ դար-
ձած է միայն լարուած զգայարանք, նոյ-
նացած սիրոյ առարկային հետ, զրկած

գեղեցկութիւնը, երբ ան՝ խենդ ու կրակ-
նային՝ զինքը թող չի տար – Բոնածըն չի
քողմի. կը հրճուեցնէ՝ բայց վայելքը
սաստիկ է, անպարփակելի. ասիկէ՝ ան-
բնական, տառապալի, հեւասպառ վի-
ճակը բոլոր սիրող բանաստեղծներուն.
այսպէս է որ կ'ըմբռնենք թէ ինչպէս Նա-
րեկացին կընայ ճեմեմբիլ կեմարաբիլ յի-
շատակով, Սայեաթ-Նովան յանա-յանա
ման գալ:

* * *

Տեղին չէ, կարելի չէ բաղդատութիւն
մը ընել երկու մեծ սիրողներուն միջեւ,
սակայն եթէ Նարեկացիին զործը աս-
տուածային սիրոյ եւ չարին ճիրաններուն
մէջ գալարուող մարդուն քնարերգութիւ-
նըն է, Սայեաթ-Նովայի տաղերը Նա-
րեկն են Գուզիմն, նոյնքան սիրատուօր,
ցաւած ու մարդկային:

ՌՌԻԲԵՆ ԳԱԶԱՆՃԵԱՆ

Խաղով եկաւ,
Ախով գնաց Սայեաթ-Նովան:

Երգով եկաւ,
Վերքով գնաց Սայեաթ-Նովան:

Սիրով եկաւ,
Սրով գնաց Սայեաթ-Նովան:

Սիրով մնաց Սայեաթ-Նովան:

ՅՈՎՃ. ԹՌԻՄԱՆԵԱՆ